

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/1

18 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <ՓՐԱՅՄՓԱԲ> ՍՊԸ 11.09.2013 թ-ի դիմումով բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 03.09.2013 թ-ի թիվ 233026 որոշման դեմ:

<ՓՐԱՅՄՓԱԲ> ՍՊԸ տնօրենի բողոքում մասնավորապես նշված է.

Ս.թ. սեպտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, կատարելով մուծում համապատասխան հաշվեհամարին, անդորրագրով ներկայացա Կենտրոնի ՀՏ և լրացնելով արտոնագրի դիմումի ձևը, փորձեցի դիմումս հանձնել սպասարկման սրահի աշխատակցին: Նա հրաժարվեց դիմումս ընդունել՝ ուղարկելով տեսչության իրավաբանների մոտ՝ ինձ վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Իրավաբանների հետ երկար քննարկումներն անցան անարդյունք: Նրանք պնդում էին ինձ վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում, իսկ ես չէի համաձայնում, քանի որ գտնում էի, որ չեմ խախտել օրենքը, որովհետև օգոստոս ամսվա վերջին օրը ոչ աշխատանքային էր, ինչն ըստ ՀՀ օրենսդրության, ինձ հնարավորություն է ընձեռում վճարում կատարել և արտոնագրի դիմում գրել հաջորդ՝ սեպտեմբեր ամսվա առաջին աշխատանքային օրը, այն է՝ սեպտեմբերի 2-ին:

Աշխատանքային օրն ավարտվեց առանց համաձայնության: Հաջորդ օրն արդեն տեսչությունում ակնատես եղա վարչական պատասխանատվության արձանագրության փաստին, ինչի հետ համաձայն չեմ: Չորօրինակ՝ հուլիս ամսվա համար արտոնագրի դիմում եմ գրել հուլիսի 1-ին, սակայն ոչ մի վարչական պատասխանատվության չեմ ենթարկվել, քանի որ հունիսի 29-ը և 30-ը նույնպես, ինչպես օգոստոսի 31-ը, ոչ աշխատանքային օրեր էին: Հավելեմ, որ այս խնդրին բախվել եմ նաև 2012 թ-ի ընթացքում:

Ես գանգատարկում եմ Կենտրոնի ՀՏ պետի որոշումն ինձ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, խնդրում եմ բեկանել այն և հարցի քննարկումն անցկացնել <ՓՐԱՅՄՓԱԲ> ՍՊԸ տնօրենի և հաշվապահի մասնակցությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <ՓՐԱՅՄՓԱԲ> ՍՊԸ տնօրենի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացուցչի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի. <Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի

(օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն, ...>:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը եզրակացնում է, որ <ՓՐԱՅՄՓԱԲ> ՍՊԸ կողմից <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի Հավելված 8-ի N 1 ձևով սահմանված հայտարարությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետք է ներկայացվեր մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 03.09.2013 թ-ի թիվ 233026 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ